«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ-ի ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի խորհրդի 28.03.2017թ. թիվ 3 արձանագրությամբ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ-ն Բյուրոյի կանոնների խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի.

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1 մասի, RL 1-001 կանոնների 75-րդ կետի և RL 1-017 կանոնների 28-րդ կետի խախտման համար Ընկերությանը հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով, ինչպես նաև 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թույլ տրված խախտումները՝ հատուցելով տուժողներին պատճառված անձնական վնասների չհատուցված մասը: